26.173

ԱՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՍԽՀ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՎՈՋԽԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

334.6
Կ-21

ԱԶԵՐՆԵՇՐ
Գյուղատնտ. բաժին
Բագու—1935

ՀՈՒՆ-ССР
Мясникян

20 FEB 2013

26173

334.6
Ա-91

2802-10

Խմբագիր Լ. Դանիելյան
Սրբագրիչ Թողարկու Ա. Արխան

Baş mətbuat mydirligi myvəkkil igi № 2252 Sifariş № 243 Tiraz 2000
Istehsalata verilmiş 22/III–35. Kaoьz formatı 82×110. Capa verilmiş 1/IV-35
Cap listi 1/2. Azərnəşr mətbəəsində basıldı. [illegible]6-lar adьna „Kitab sarajь".
Bakь, Əli Bajramov kycəsi.

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՅԽՀ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՎՈՉԽԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*1. Վոչխարաբուծական ապրանքային ֆերմաներում աշխատող կոլտնտեսականների աշխատանքը կազմակերպվում ե գործարքային հիմունքներով ըստ սպասարկվող գլխաքանակի, գլխաքանակի աճեցման, բեղմնավորման պլանի կատարման, ըստ խուզված բրդի և ստացված կաթի արտադրանքի։*

*2. 200 ից ավելի մաքի ունեցող վոչխարաբուծական ապրանքային ֆերմայում (Վ. Ա. Ֆ) կազմակերպվում ե մշտական բրիգադ կոլտնտեսականներին ամրացնելով բրիգադին վոչ պակաս քան 3 տարով։*

*Չոբանների բրիգադի կազմը սահմանում ե կոլտնտեսության վարչությունը այն հաշվով վոր միջին թվով մի կոլտնտեսականի ծանրաբեռնումը հասնի 150-200 գլուխ վոչխարի, հաշված բոլոր հասակները, յելնելով տեսակներից և պահելու պայմաններից։*

Ծանոթություն.—*ախոռային խնամքի պայմաններում մի հովվի բեռնավորումը կարող ե իջեցվել, մինչև 100-125 գլուխ։*

*3) Արտադրական կամպանիաների շրջանում, յերբ լրացուցիչ բանուժ ե պահանջվում (բեղմնավորում, ծին, խուզելը, կթելը) բրիգադին ոգնելու համար ժամանակավոր աշխատողներ են տրվում։*

*4) Վոչխարաբուծական ապրանքային ֆերմաներում աշխատանքը ղեկավարելու համար կոլտնտեսության վարչությունը առաջադրում ե Վ. Ա. ֆերմայի վարիչի թեկնածությունը և ներկայացնում ե շրջհողբաժնին հաստատելու համար։*

*Յերկու և ավելի բրիգադ ունեցող վոչխարաբուծական ապրանքային ֆերմայի վարիչն ազատվում ե գլխաքանակի անմիջական սպասարկման աշխատանքից։*

*Մի բրիգադով սպասարկվող ֆերմաներում բրիգադիրը ինքն ե հանդիսանում ֆերմայի վարիչը։*

1008
3714/01

Խոշոր ֆերմայի (1000 ավելի գլխաքանակով) և ազնվացեղ վոչխարաբուծական անասնապահական ֆերմաների վարիչի թեկնածությունը առաջադրում է շրջհողբաժինը և հաստատում է հողժողկոմատը։

5. 150 գլխից պակաս ունեցող Վ. Ա. ֆերմայում աշխատանքի համար հաշված բոլոր հասակի վոչխարներին խնամելու համար մշտական ամրացվում է մի կոլտնտեսական, կարիք յեղած դեպքում վերջինիս ոգնելու համար ամրացվում է մի արածացնող։

6. Տարվա սկզբին կոլտնտեսության վարչությունը յուրաքանչյուր հովվի բրիգադիր, կամ հովիվ-կոլտնտեսականի կայուն տարեկան առաջադրանք է սահմանում՝ հոտի աճման, գլխաքանակի աճի պահպանման, բուրդ խուզելու, միս և կաթ ստանալու գծով։

7. Յուրաքանչյուր հովիվ կոլտնտեսականին կատարված աշխատանքի համար բրիգադային գործարքի դեպքում աշխորեր են հաշվում.*)

## Աշխորերը հաշվում են

1) Արածացնելու և հոտը խնամելու համար—ամսի վերջին։

2) Բեղմնավորված յուրաքանչյուր մաքու համար—այն դեպքում, յերբ վորոշակի է մաքու հղի լինելը։

3) Մի գառը մինչև ծծից կտր՝ լը մեծացնելու համար—ծծից կտրելուց հետո։

4) Մի ցենտներ խուզած բրդի համար—խուզելուց հետո։

5) Մի ցենտներ կթած կաթի համար—վոչ պակաս քան ամիսը 3 անգամ։

8. Ֆերմայում 2 տարի աշխատած կոլտնտեսականների համար սահմանված գնահատումները ավելացվում են 10 տոկոսով, իսկ 3 և ավել տարի աշխատողների համար—15 տոկոսով։

9. Բրիգադիրը չի ազատվում աշխատանքից, բայց նրա վաստակած աշխորերի թվի համաձայն, լրացուցիչ ավելացվում է 15 տոկոս։

10. Վ.Ա. ֆերմայի այն վարիչը, վորը ֆերմայում աշխատում է 2 տարուց, վոչ պակաս և անմիջապես չի սպասարկում վոչխարներին, աշխորերը հաշվվում են ըստ3-րդ խմբի (1 աշխոր), իսկ 2 տարուց ավելի աշխատողի համար հաշվվում է—ըստ 4-րդ խմբի (1,25 աշխոր)։

Վ. Ա. ֆերմայի այն վարիչների աշխատանքը, վորոնք վոչխարաբուծության գծով վորոշ պատրաստություն ունեն (5-ամսյա

*) Տես աղյուսակը 4-րդ յերես։



| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Հոտը բրիգադով սպասարկելու դեպքում, յերբ հոտի մեջ կան | | | 00 գլխից պակաս, վորի մեջ կան 150 և պակաս մաքի, հոտը մի կոլտնտեսականի կամ հովվի հետ միասին սպասարկելու դեպքում |
|---|---|---|---|---|
| | 150-ից մինչև 250 մաքի | 250-ից մինչև 350 մաքի | 350-ից մինչև 500 մաքի | |
| 1. Արածացնելու և հոտը խնամելու համար մի ամսում . . . . . . | 1 0 | 1 0 | 1 0 | 1 0 |
| 2. Յուրաքանչյուր բեղմնավորված մաքու համար . | 0, 1 | 0,07 | 0,06 | 0,25 |
| 3. Մի գառը մինչև ծծից կտրելը մեծացնելու համար | | | | |
| ա) ապրանքային ֆերմաներում . . . | 0,6 | 0,4 | 0,3 | 1,0 |
| բ) ազնվացեղ ՎԱ ֆերմաներում . . . . | 0,9 | 0,6 | 0,4 | 1,3 |
| 4. Մի ցենտներ խուզած բրդի համար յելնելով վոչխարի բրդատվությունից . . . . | 7—10 | 6—8 | 5—7 | 10—15 |
| 5. Մի ցենտներ կթած կաթի համար՝ յելնելով կաթնատվությունից . | 0,75—1 | 0,6 0,7 | 0,4—0,6 | 1,0—1,5 |

Ծանոթություն.—չոբաններին վորոնք սպասարկում են մատղաշների և կրտածների հոտերին, տարվա ընթացքում գրանցել 0,3 աշխոր յուրաքանչուր գլխի հետևյեու, պահպանելու համար, այդ դեպքերում ամսական 10 աշխոր հետեվելու համար չի տրվում։

դասընթացներից վոչ պակաս) գնահատվում է 15 տոկոս բարձր։

11. Արածացնողի աշխորերը հաշվվում է յելնելով սպասարկող գլխաքանակից 20—25 տոկոս ցածր այն գնահատումների, վորոնք սահմանված են շարքային հովվի համար։

12. Ժամանակավոր աշխատողների աշխորերը հաշվվում են՝ յելնելով սահմանված արտադրական առաջադրանքները նրանց կողմից կատարելուց հետո։

Գառներ պահող հովվի աշխորերը հաշվվում է ըստ նրա խնամած գառների քանակի ըստ գառների գերության։

Խուզողների աշխորերը հաշվվում է, ըստ խուզած բրդի։

Կթողների աշխորերը հաշվվում է ըստ կթած կաթի քանակի։

Ծանոթություն.—*Ժամանակավոր աշխատողների համար մշակման նորմաները և գործարքային գնահատումները սահմանում է կոլտնտեսության վարչությունը։*

*13. Եթե չորանների բրիգադան լավ աշխատանքի հետեվանքով ապահովում է մատղաշների լրիվ պահպանումը հոտի լավ գերությունը, և սուրա չմնալը, այդ դեպքում կոլխոզի վարչությունը նման բրիգադի բոլոր անդամներին ընդհանուր վաստակած աշխորերի թվից մինչև 10 տոկոսի աշխոր է հաշվում աչքի ընկնող հարվածայիններին մինչև 15%, իսկ բրիգադիրին և ֆերմայի վարիչին մինչև աշխորերի 20%։ Աշխորերը հաշվում են լավ աշխատանքի համար, բրիգադի համար սահմանած արտադրական առաջադրանքը կատարելուց հետո։*

*14. Յուրաքանչյուր հովիվ-կոլտնտեսական գառների աճեցման նորմաները գերակատարելու համար ստանում է վորպես պարգեվ 1—2 գառ սահմանված նորմաներից դուրս աճեցրած գառների թվից։*

*15. Եթե վատ աշխատանքի հետեվանքով չորանների բրիգադան թույլ է տվել մատղաշների անկում, սուրահ մնալը և գլխաքանակի նիհարությունը, այդ դեպքում կոլխոզի վարչությունը ֆերմայի վարիչից և նման բրիգադայի բոլոր անդամներից ընդհանուր վաստակած աշխորերից մինչև 10 % պահում է։*

*Անասունները փչանելու, սուրահ մնալու և գլխաքանակի նիհարության համար աշխորերից պահվում է յուրաքանչյուր ամսվա վերջում, վորի ընթացքում տեղի յե ունեցել այս բոլորը։ Վատ աշխատանքի առանձին ցուցանիշների համար, աշխորերի պահումների չափը սահմանում է կոլխոզի վարչությունը այն հաշվով, վորպեսզի տարվա ընթացքում բրիգադայի յուրաքանչյուր անդամից և ֆերմայի վարիչից պահած ամբողջ գումարները տարվա ընթացքում վաստակած ընդհանուր աշխորերի 10%-ից բարձր չլինեն։*



ՀՀ Ազգային գրադարան
NL0205940

320

ASŞÇ XALQ TOPRAQ QOMISARLЬĢЬ

# ASŞÇ qolxoz qojunculuq əmtiə fermalarьnda əmək təşkili haqqьnda QAJDALAR

AZƏRNƏŞR
Kənt-təsərryfat şө'вəsi
Вakь – 1935

ՀՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-ССР